

## Հայտարարություն

### Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն հայտարարում է մրցույթ՝ մասնագիտական պաշտոնների 6-րդ ենթախմբի թափուր պաշտոնը համալրելու համար

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է **մրցույթ՝ Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության մասնագետի (ծածկագիրը՝ 22-4-23.5-Մ6-1)** քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն համալրելու համար և վարկանիշային ցուցակի համապատասխան համարներում գրանցված անձանց հրավիրում է հարցազրույցի, որը տեղի կունենա 2020 թվականի օգոստոսի 31-ին, ժամը 10:00-ին Կոմիտեի վարչական շենքում (հասցե՝ ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան):

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝

- 1) Անձնագիր և ՀԾ համարանիշ պատճենով կամ նույնականացման քարտ պատճենով.
- 2) դիպլոմ (առկայության դեպքում) պատճենով.
- 3) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում) պատճենով,
- 4) արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին զինվորական կցագրման վկայական պատճենով կամ համապատասխան տեղեկանք.
- 5) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:

Հարցազրույցը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձի չափը կազմում է՝ 111 115 (հարյուր տասնմեկ հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվություն ստանձնելու կարողություն:

Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության մասնագետի (ծածկագիրը՝ 22-4-23.5-Մ6-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում ([Էլեկտրոնային օրինակը կցվում է](#)):

Աշխատավայրի հասցեն է՝ ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան:

Վարկանիշային ցուցակում գրանցված անձանց հարցազրույցի հրավիրելու համար տեղեկացնելու վերջնաժամկետի օրն է 2020 թվականի օգոստոսի 26-ը:

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 060-43-42-63  
հեռախոսահամարով կամ ուղարկել հաղորդագրություն [olga.mkhitaryan@gdca.am](mailto:olga.mkhitaryan@gdca.am)  
Էլեկտրոնային փոստի հասցեին:

21 օգոստոսի 2020թ.